

նիմ, իս իմ մօր ասիմ. «Իս Գաւիթ չըմ ասնը, իս դտիմ Գաւթայ խասիյաթ¹. դադար կայէք, թօ հեօլ զանի, սպանի, յիի էդեր ի, Գաւիթ իմ գլեօխ աը ցաւըցի. որ սկոււն ի, համա աղէկ էնի, մկայ զանիմ, մեւցուցիմ, իս մօտէն աղատուիմ. որ էն ճուչացաւ, շատ բան տէնե իմ գլեօխ»:

25. Ընկերներ զօրերնք կտան դեն. Մէլըբ զիւր հեօլ կը զարկը. Գաւիթ ձեւ կտայ, հեօլ կը բռնի, կը թալի. որ կը թալի, եօթ մարդ անիւնց մօտէն կսպաննը, կըլը կգեայ տուն:

26. Էդ տեղ անոււնց քէֆ շատ կը կուտուը. ընկերներ կասըն — Մէլըբ, մինք էկանք քէֆ էնելիւ, դիւ գալը քիւ ակպէր Գաւիթ, որ ծճւււ էր, վրէ՛ բերիր. որ եօթ մարդ սպաննէր: Մենք էն սպանուի ինչդ առնընք ասնընք քաղքը մէջ. քաղքը մի ա՛տաըն. «Տնէն գնացքք քէֆ անիլիւ, չէ մարդ սպանիլիւ. վայ Մէլըբ, վայ Մէլըբ, էդա դիւ ինչ խանիր մեր գլեօխ»:

27. Մէլըբ էսաց. — Գաւիթ իմ գլեօխ խանից, չէ որ բժի գլեօխ Գաւիթ իմ նամուռն զպա. դիւ գեայէք. իս էրթամ տուն, իս գԳաւիթ կսպանիմ:

— Կընըն, ջանդակներ կտանին, լեալեօլ կգեան տուն:

28. Մէլըբ կգեայ ուր տուն. կը տանայ Գաւիթ քնի ի. թուրն քեշից, որ Գաւիթն աը զանէր. մէր կայնաւ յաւաջ, էսաց.

— Մէլըբ, էդ ինչ տենիս: Էսաց. — Տըսպանիմ:

Էսաց. — Վրէ ասպանիս:

29. Մէլըբ մօր վրայ բարկացաւ. — Էդա՛, էսաց, ինչ արաւ, դիւ էրեր, իմ գլեօխ խանիր. քի ասիմ. «Գաւիթ չըմ ասնը. իս ասըր, էդա բանիր խանից իմ գլեօխ. իս ամօթու էդա քաղքը մէջ չըմ կնայ գլեօխ խանի դիւ. գԳաւիթ ասպանիմ: Էսաց. — Մէլըբ, իմ ծճը կալթ քիւ վերայ խարամ բլնը, որ դիւ Գաւիթն զանիս. Գաւիթ աղայ ի, աղէն շատ բան կը բռնի. ակըր խելք չկայ. որ խելք չկայ, անխելք բուն կը բռնը. իս չըմ թուրիկ, որ դիւ Գաւիթն սպանիս:

30. Որ կտաը, Մէլըբն էլ մօր ըռըկոււն² սկոււն կը բարկանայ կըլնը դիւ. կը ճամբուը քաղքը մէջ, մէկ քեանի խելքու վ մարթ կը բերի, կըսի. — Գիւք իմ դիւան, իմ մօրն ինիք. արսնանք դիւ ինչ կըսըք:

31. Անիւնքն էլ խիլքեօլ ին. էսաց. — Մէլըբ, էս որ քիւ մէրն ի. հալքաթ քիւ մօր խիլք քեան քիւն աղէկ ի, քիւ մէրն ի. դիւ անիւ աղէն իս, քիւ մէր ինչ կըսը, դիւ անիւ

1 Թուրք. — բնաւորութիւն:

2 Հակառակ չիկրու: